

Ս Ա Ի Ո Ւ Ղ

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ա Լ Ֆ Ի Է Ր Ե Ա Յ

Տես երես 345

Հ Ա Ն Գ Է Ս Զ Ո Ր Ր Ո Ր Գ

Տ Ե Ս Ի Լ Ա .

Յ Ո Վ Ն Ա Ք Ա Ն , Մ Ե Լ Գ Ո Ղ

- ՄԵԼ . Ասա գու ինձ , Յոննաթան , իցէ եւս այլ մարթ առն իմոյ
Ի վրան դառնալ արքայի :
- ՅՈՎ . Ա՛հ , մի . ոչ հաշտ է Սաւուղ .
Թէպէտ եւ յանձն իւր արդ գարձեալ , բայց խոր ի նմա է յոյժ նախանձ .
Յերկար լիցի բըժըշկութիւն : Դարձ առ փեսայդ , եւ մի թողուս . .
- ՄԵԼ . Ա՛հ , եւ ո՛ր , եղբւ՛կ , քան զիս ապերշտնիկ . . . : Այլ ես ըզնա
Այնպէս խնամով թագուցի , զի յոչ ումեք դայցէ նա գիւտ .
Առ նա ուրեմն արդ գարձայց :
- ՅՈՎ . Ո՛վ Տէր , ահա ինքն իսկ է հայրն .
Խառվեալ անձամբ աստ գիմէ . . բա՛ նրմին չեք ուրեք գազար :
- ՄԵԼ . Եզո՛ւկ եմ ես . . զի՛նչ ասացից նրմա . . հապա խոյս տացուք :

Տ Ե Ս Ի Լ Բ .

Ս Ա Ի Ո Ւ Ղ , Յ Ո Վ Ն Ա Ք Ա Ն Ե Ի Մ Ե Լ Գ Ո Ղ

- ՍԱԻ . Ո՞ր խուսափէ մինչ ես գամ : Դո՛ւ , կին :
- ՄԵԼ . Տէր իմ . . .
- ՍԱԻ . Ո՛ւր է Դաւիթ :
- ՄԵԼ . . . Ոչ գիտեմ . . .
- ՍԱԻ . Ոչ գիտիցես :
- ՅՈՎ . Հայր . . .
- ՍԱԻ . (Ա— Մեծօղ) Ի խընդիր ելցես նրմին .
Փութասջիր աստ ած ըզնա :
- ՄԵԼ . Ե՛ս ի խընդիր նորա . . . եւ ո՛ւր :
- ՍԱԻ . Արքայ առ քեզ խօսեցաւ , եւ ոչ լըւար գու նրմա :

Տ Ե Ս Ի Լ Գ .

Ս Ա Ի Ո Ւ Ղ , Յ Ո Վ Ն Ա Ք Ա Ն

- ՍԱԻ . . . Սիրենս գու զիս Յոննաթան . . .
- ՅՈՎ . Ա՛հ հայր . . Սիրեմ ես ըզքեզ .
Բայց սակայն ինձ սիրելի միանգամայն են փառք քոյին .
Վասն որոյ եւ է երբէք զի եւ կըրից քոց անարդար ,
Որքան որդւոյ ումեք հընար՝ ըզքեմ կալեալ ես անկուշեմ :
- ՍԱԻ . Ըզհօրն յաճախ ընկըրկես գու ըզբազուկ . այլ ըզսուսերս
Զոր ոչ յայլոց ներես սիրտ , ի քոյդ ըզնա գարձուցանես :
Արդ պահեա՛ , պահեա զԴաւիթ գու կենդանի , եւ դա ընդ հուպ . . .
Ի սըրտիդ ո՛չ լըսիցես աղէ ըզձայն գու բարբառոյ ,
“ Դաւիթ լիցի թագաւոր , ” — Դաւիթ . . . բայց թո՛ղ նախ կորիցէ :

ՅՈՎ. Եւ ի սըրտիդ ոչ չըսիցես զահեղագոյն եւ դու ըզձայն ,
 Ոչ աղէ գոչէ քեզ Տէր . “ Ինձ սիրելի է Դաւիթ .
 Ինքնն նա այր է Աստուծոյ , Ոչ ապաքէն եւ գործք նորա
 Հաւատարիմ զայդ առնեն : Եւ ինքնին ոչ Աբեններեայ
 Նախանձայոյդ կատաղութիւն համր ընդ առաջ իւր պապանձի :
 Դու , դու ինքնին յորժամ անձին ըզգաս , ի լոկ իւր երեւոյթ
 Ոչ ըզքոյին գիտես ըզխէթս իբրեւ ըզմէդ ցընդեալ յարեւ :
 Եւ մինչ ոգին առ քեզ չար դարձ առնիցէ՝ կարծես ինչ անդ
 Թէ զաջ քո ես ունիցիմ . Աստուած ինքնին՝ որ արգելու .
 Ըզմերկացեալ քո զերկաթ այն ինչ ի սիրտ վարսեալ նորա՝
 Քեզ անդէն հարկ լիցի ձրգել . եւ դու՝ դու ինքն յողբ եւ ի կոծ
 Անկցիս առ ոտս անդ նորա , դու՝ ստորջացեալ եւ յապաշաւ .
 Զի ոչ , դու չես ամբարիշտ . . .

ՍՅԻ . Արդար ասես : Անմկնեղի
 Իմն է Դաւիթն այն վասն իմ : Այն ինչ հազիւ տեսեալ յԵլա՝
 Գրտանէր յաչս իմ շընորհս , այլ ոչ երբէք եւ ի սըրտի :
 Մինչ հուպ ըզնա լեալ սիրել՝ գուռ անկանի ընդ մէջ զայրոյթ ,
 Եւ զնա յինէն բաժանէ : Մինչ ի կորուստ նորա երգուեալ՝
 Թէ զնա տեսից՝ զինաթափ առնէ նա զիս , զարմանս այնքան
 Յիս աղբեալ զի յոչինչ ես առաջի իւր լուծանիմ . . .
 Ահ , կարի քաջ , այս վըրէժք իցեն ձեռին ամենակալ :
 Արդ ըզքեզ , ո՞ ձեռն ահեղ , ըզքեզ առնում արգ ճանաչել . . .
 Բայց աղէ զինչ . . եւ ուստ ուստեք ես ըզպառճառսն խընդրիցեմ . . .
 Աստուած , իմ չիք թըշնամանեալ ըզնա երբէք . հի , այս վըրէժք
 Քահանայից ես դասու : Դաւիթ գործի է Սեղանոյն ,
 Զարեացապարտ . ինքն ի Հռամա ետես ի մահ ըզՎամուէլ .
 Նրմա զլետին իւր ըզխօսս ծերն աւանդէր անհաշտելի .
 Ո՞ գիտէ , թէ ոչ եւ զիւղըն սըրբութեան երկնապարգեւ ,
 Զայն՝ որով նախուստ երբեմն ինքն իսկ էօծ զիմ ըզճակատ ,
 Զիցէ հեղեալ անօրէնն ի թըշնամին անդ ի գըլուխ :

ՍՅՎ. Արդեօք դու զայդ գիտիցես . . . խօսեաց . . . Ահ դու գիտես . . . խօսեաց :
 Ոչ գիտեմ , հայր . այլ թէ եւ զայդ գոյր իսկ կարծել , ոչ ապաքէն
 Եւ ինձ յայգմիկ են թըշնամանք . ոչ ես որդեաց քոց անդրանիկ .
 Թէ գուռ ընդ հարսդ յաւեցիս , ոչ ինձ ըզգահդ աւանդիցես :
 Իսկ եթէ ես լուռ կայցեմ , ում այլ իցէ ունել բողոք :
 Հատ իսկ զինեւ ի կորով , ի լաւութեան եւ ի հանճար ,
 Նա ի բնամ՝ գըլէ Դաւիթ . եւ որչափ ինքն առաւելու ,
 Եւ իմ այնչափ յաճախէ սէր : Արդ թէ՝ որ տայն եւ որ բառնայ
 Զիջխանութիւն՝ զայդ առ Դաւիթ հանեալ տայցէ , զինչ հաւաստիս
 Իցէ խընդրել ինձ մեծագոյն . նա քան զիս յոյժ արժանաւոր .
 Եւ յորդուոցն իւր առաջնորդ ի մեծ ինչ իրս կոչէ զնա Տէր : —
 Այլ իմ երգումըն քեզ տըւեալ զի հըպատակ հաւատարիմ
 Էր քեզ նա ցանկ , Լանկեղծ որդի : Օ՞ն տուր աղէ դու զապագայն
 Ում անկ իսկ է՝ Աստուծոյ . եւ սիրտ քո մի զդէմ Ամահին ,
 Մի՞ ընդդէմ ճըշմարտութեան ինչ սալացեալ եւ խըստասցի :
 Եթէ անդ ի Սամուէլ ոչ ոմն Աստուած էր որ խօսէր ,
 Զիւրդ պարզ իւր քործով հիւանդագին ոք ծերունի
 Գող իմն ընդ մէջ տապանին վասն Դաւթի կարէր այնչափ :
 Անծանթ այն խառնութիւն մեծարանաց եւ ոխութեան
 Ընդդէմ Դաւթի զոր ըզգաս , այդ սըրտատրոփ քո բաբախմունք
 Ի լուր անուան պատերազմի (երկիւղ՝ յառաջ քեզ անծանթ) ,
 Ուստի՞ գայցեն քեզ , Սաւուղ : Ո՞ր զորութիւն է մարդոյ՝
 Զի այդմ իցէ բաւական . . .

ՍՅԻ . Է՛հ , զորպիսին բարբառիցիս .
 Դու Սաւուղայ ես որդի : — Եւ ոչ քեզ փոյթ ինչ է գահու : —
 Սակայն զանգուծ իրաւունս որում ունին զայն չըգիտես .
 Հիջեալ տունս իմ համայն եւ հիմն յարեւ տապալեացի
 Ի նմանէ՝ որ զարքունիս մական գրաւեալ յինէն հանցէ :
 Եղբարք քոյին , եւ քո որդիք , եւ ինքնին դու ի գըլուխին . . .
 Ոչ ուրեք ոք մընասցէ յիմ ի զարմից անտի նըշխար . . .
 Ո՞վ գաժան արքայութեան անյագելի ծարաւութիւն ,
 Իմ իմիք չես ձեռնամուխ . աչս արձակեալ ի ծիրանիս՝
 Եղբայր ի մահ տայ զեղբայր , մայրն ըզծընունդս իւր սատակէ .

Կին առն կայ գարանի , որդին ըզհօր բառնայ զարեւ . . .
Դադարք ուրեմն են արեան եւ եղերանց՝ գահն արքունի :
Թակ իցէ մահկանացուն երկնից ընդդէմ՝ սրբոյ ասպար .
Ի զուր են ըսպառնայիք , աղերս խոնարհ զօրէ եւեթ
Յողդք ի հաշտ զիջուցանել զաստուածաստարն բարկութիւն ,
Որ ըզգողուն հարեալ ջաղիւն , եւ զխոնարհան անցեալ գընայ :

ՏԵՍԻԼ Դ .

ՍԵՆՈՒՂ , ՅՈՎՆԵԹԱՆ , ԱԲԵՆՆԵՐ , ԱՔԻՄԵԼԷՔ , ԶՕՐԱԳԱՆՔ

ԱՐԵ . Տէր արքայ , թէ առաջի քո գարձ առնեմ՝ չեւ ըզհեղատ
Ոսոխ արեան հոսեցեալ , զիս բարձր ի գոյն ստիպեն պատճառք :
Դաւիթ արին այն արանց , յորում եգեալ կայ յաղթութիւն ,
Դաւիթ ուրեք չերեւի : Մի եւեթ արդ մընայ ժամ
Առ սահմանեալ գործ մարտին . ահաւանիկ յեռանգն ի հուր
Վառեալ զօրուն՝ զօդս համայն լընուն ի ձայն աղաղակի .
Թընդայ երկիր ի գափր ոտից փայլակներն թաց երկվարաց .
Կազկանձ , խոխոզ խըրխընջիւն , սաղաւարտաց , սուսերց փայլիւն ,
Եւ թունդ ի թունդ դըղըրդիւն խրախոյս եւ վատ ազգեն սըրտից .
Այլ ըզԴաւիթ ո՞ր ետես . — ոչ իսկ ուրեք նա գըտանի : —
Բայց ալէ տես ինձ , արքայ , (եւ այս յերկնից անշուշտ նըպաստք)
Տես եւ ո՞ր արդ ընդ նորա մարտին ի գաշտ երեւիցի :
Սա ինքնին , որ ի բընքուշ քահանայից պատի բեհեզ ,
Գող ի գողս ի ռազմին անդ մերձ ի գունդըն Բենիամին
Դողւալով զօղեալ թաքէր : Աւանիկ , լուր ի նըմանէ
Ըզկարեւոր հարկ պատճառին որ յայս ըզնա ածէ վըտանդ :
Ասացից այդ զպատճառս՝ թէ արքայի ներէ ցասումն . . .
Յասունն արքայի . ապ՝ արժանի ես դու նըմին . . . :
Այլ աղէ ո՞ր իցես դու . . . Թըւիմ ըզքեզ ճանաչելոյ .
Ոչ ապաքէն ի զառանցեալ եւ ի գողոզ ես դու հօտէ
Տեսանողացն հռամայ :

ԱՔԻ . Զեփուտ զանձամբ ես արկանեմ .
Ես Ղեւտացւոց առաջին , Ահարոնի մեծի սըրբոյ
Ի գործ մեծ պաշտամանն յոր ընտրեցաւ նա յԱստուծոյ ,
Կարգ ըստ կարգէ անցելոցն յերկար ի շար՝ ես յաջորդեմ :
Առնթեր տապանակին կամ ի Նոմբա . երբեմն յաւուրց
Եւ տապանակն իսկ ուխտին կայր ի միջի անդ բանակին .
Մեծ իմն արդ համարիցի , թէ՛ եւ զանխուլ անդր երեւի
Աստուածական պաշտօնեայն . տարադէպ իմն է եւ նոր
Քահանայն սըրբանուէր ուրանօր թագ կապէ Սաւուղ .
Սակայն ոչ եւ ուրանօր Խորայէլ մարտ յարդարիցէ ,
Թէ Աստուծով է յաղթութիւն , որպէս եւ ցանկ իսկ է յաղթեալ : —
Զիս դու ոչ ճանաչես . եւ զի՞նչ զարմանք . մի զանձըն քո
Ճանաչէս : — Ըզքնացս ոտից կամակորեալ ես ի շաւղաց
Որ յԱստուած անդըր տանին . եւ ես կամանդո՞ր՝ առ տապանակն ,
Ուր մեծն Աստուած բընակէ . անդ՝ ուր յամաց անտի բազում
Ոչ եւս Սաւուղ երեւի : Աքիմէք անուն է իմ :
ՄԵՆ . Դա մատնութեան յայտարար է ինձ անուն . արդ ծանեայ քաջ :
Ի գէպ իսկ աստ հասանես . ասա ինձ արդ , ոչ այն ես դու՝
Տարամերժեալն որ Դաւթի տայիր ամուր ասպաւինի ,
Եւ անքոյթ պահպանութիւն , եւ կերակուր եւ ճողոպրումն .
Ոչ դու եւ զէնս : Եւ զէն զոր . զնըւիրեալ սուր Փըղըտացւոյն ,
Որ առկախեալ յուխտ Աստուծոյ՝ կայր առ նովին տապանակաւ ,
Ուստի պիղծ քո ձեռամբ՝ անտի ըզնա դու հանէիր
Զի՛ նդ մէջ ածցես ժանտ ոսոխի տեառնըդ եւ լոկ քո արքային : —
Դու արդ գաս , անօրէն , զի նիւթեացես նենգ բանակիս .
Եւ ո՞ր առ այդ երկբայութիւն . . .

ԱՔԻ . Այո , նենգեւ քեզ հասանեմ .
Զի գամ մաղթեւ յառ Աստուծոյ զինուց քոյին ըզյաղթութիւն ,
Զորքեզ Աստուած ոչ կամի : Ես ինքն այո , ես իսկ եմ այն ,
Որ եւ աջ նըպաստաւոր Դաւթի ուրումնն մատուցի .
Այլ ո՞ր Դաւիթն այն իցէ . ոչ արքայի այրն այն փեսայ .

Ո՞չ արդեօք հրդորագոյն ի նահատակս իւր քաջայազմ .
 Ո՞չ Դաւիթ գեղեցկագոյն , եւ մարգասէր իսկ եւ արգար
 Յորդիս է նա Խարայէլի : Ո՞չ ի մարտին անդ հանգիսի
 Դա զօրութիւն քո եւ կորով . եւ յարքունիսդ իսկ , յանգորրու ,
 Ո՞չ երգոց իւր նըւագօք սըրտի քոյին իցէ նա տէր :
 Օրիորդաց ինքն սէր , ինք բերկրութիւն ժողովրդեան ,
 Ա՛հ եւ երկիւղ թընամեաց : Իմ՝ զայգալիսիդ էր ճողովրեալ :
 Աղէ ո՞չ գոյզն ինչ յառաջ նախկին ի փառս իւր գարձուցեալ՝
 Դու ինքն ըզնա ընտրէիր առաջնորդել պատերազմին ,
 Յաղթութիւն քեզ ի բանակն անդ վերածել , եւ զխէթ բեկմանն
 Զորքեզ ի սիրտ եդ Աստուած՝ մերժեալ ի բաց վըտարել : —
 Դու եթէ զիս գառապարտես , զքոյդ եւս ի զոյգ տաս գառակնիք :
 ՍԱՒ . Արդ ո՛ւստ ի ձեզ գըթութիւն . ձեզ՝ քահանայքդ անդըթութեան ,
 Ամբարիշտօք , եւ ծարաւիք հեղու զարիւն հանապազօր :
 Մեծ յոճիր գրէր Սամուէլ , զի ոչ զարեւ ես շիջուցի
 Զարբային Ամաղեկայ՝ զէն ի ձեռին կալեալն ի մարտ ,
 Ըզվըտեմ ոք թագաւոր , մարտիկ վեհանձն առաքինի ,
 Որ եդեալ առատութեամբ զարիւնն ի սէր իւրոյ ազին : —
 Ո՛վ տարաբախտ արքային . ձրգեալ ի գէմս ինձ ընդ առաջ
 Գայր խիստ պընգեալ ի տոռունս . գոյր ի նըմա , թէպէտ պարտեալ ,
 Ազնւական սիգութիւն , որ ոչ թէ տալ էր թընամանս ,
 Բայց ոչ խընդրել իսկ շընորհս : Վընասապարտ արիութեան
 Թուեցաւ նա յաչս Սամուէլի . երկցս աջոյն իւր ղեւտական
 Ժանաղն միխէր զերկաթ մահուն յանպատըսպար ի սիրտ նորին : —
 Այսոքիկ են այսոքիկ հանդէպ մարտից ձեր , վառք արանց :
 Իսկ բընիկ իւր արքային որ ըզյոխորսն ոք ըզճակատ
 Ընդգէմ ի վեր ամբարձցէ , վահան ի ձեզ եւ ապաւէն
 Զանձին ի ձեզ գըտանէ : Բայց ի հոգոյ Խորանին՝
 Այլոյն համայն լի են ձեր սիրտք : Զխնչ աղէ , ոյք ոմանք էք գուք .
 Ծընունդ չար եւ ապառու՛մ , որ վըտանգացս ընդ հովանեաւ
 Կայ խընդայ . որ յանարի պատեալ ի կտաւըս զիրանունս՝
 Յաւակնիք գըլել ըզմեօք , որ գամք ի քիրտն ընդ զըրահիւք .
 Ըզմեօք՝ որ ընդ արիւն , յա՛հ եւ ընդ մահ՝ վասն ամուսնաց ,
 Վասն որդւոց , եւ վասն ձեր ի գըլնովին՝ զոր ամենայն
 Վարեմք կեանքս դըժընգակ եւ արհաւրօք հանապաղ լի .
 Եւ գուք վառքդ ի մարդկանէ , քան ըզկանայս գառարկասուն ,
 Դուք անզօր գաւազանաւ եւ նըւագօքդ արուեստաւոր՝
 Դուք սանձել ինչ խընդրիցէք ըզմեր սուսերբբոս , եւ ըզմի՞շ :
 Իսկ եւ գու , ո՛ իցեո . թագաւոր ոմն ես գու երկրի ,
 Այլ առաջի Աստուծոյ ո՛վ թագաւոր : Դարձ յանձըն քո ,
 Սաւուղ . ոչ այլ ինչ ես գու՝ քան թէ փոշի պըսակաւոր : —
 Ես՝ յինէն ոչ ինչ եմ . այլ շանթ եմ ես , մըրրիկ եւ հուր՝
 Թէ Աստուած յիս իջանէ . Աստուած որ զքեզ հաստեաց՝ հրդօրն ,
 Որ հաղիւ զաչս իւր ի քեզ հաստատիցէ՝ եւ ո՛ր Սաւուղ : —
 Ոչ ուղիւր ըզկողմն ունիս գու զԱգագայ . եւ թիւր յուղին
 Զաւաւս հորին գընաս ըզհետ : Ամբարըշտեալ ոք արքայի
 Զխնչ քան ըզսուր թընամի գուցէ ինչ այլ ի պատուհաս .
 Եւ սուսեր ո՛ր հարկանէ՝ քան զոր բարձրեալ կամիցի Տէր :
 Ըզվըտէժս իւր խընդրելի Աստուած ի վէմանդ գըրոշմէ .
 Եւ ոչ ընդհատ յարայելէ՝ եւ փըշտացւոյն զայդ յանձն առնէ : —
 Սարսեսլիւր , գու Սաւուղ . ահա ի սեաւ ամպս ի բարձու
 հուր ի թեւըս խոյացեալ զմահուն ըզգոռ գիտեմ հրեշտակ ,
 Աջ նորա մերկացուցեալ ըզվըտէժիւր բոցեղէն սուր
 Եւ ահեկան անդ զալիս ունի զգըլխոյ քո ամբարիշտ .
 Դողա Սաւուղ , սարսեսլիւր : — Տես ո՛ր մահ ըզքեզ վարէ .
 Սա ինքն , այրս այս Աբեններ , սա ինքն եղբայր սատանայի .
 Սա որ ըզսիրտ քո զծերացեալ ի կասկած անդր ի խէթ բանայ ,
 Որ ըզմարտիկըդ թագաւոր քան ըզմանուկ առնէ խոնարհ :
 Այր գու , ո՛վ ամբարիշտ , գու ինք խախտեալ եւ տապալեա
 Ըզքոյն տան ճըշմարիտ եւ զանվըկանդ մոյթ եւ նեցուկ :
 Ո՛ր արդ է տուն Սաւուղայ . յալիս անդ ջուրց եգաւ իւր վէմ .
 Ահաւանիկ տատանի . ահա հոսեալ գընայ կործան .
 Ահա յաճիւն լուծեալ համայն . ահաւանիկ եւ ողինչ :

- ՍԱԻ . Մարգարէք իմ վընասուց , զի եւ քոյոցդ իսկ ոչ իցես .
Ոչ տեսեր նախ քան ըզքոյդ այսր ի բանակըս ժամանել
Եթէ մահու աստ մեացիս . ըզքոյն ես քեզ կանխատեսեմ ,
Եւ Աբեններ զայդ ի գործ տացէ գընել : — Օ՞ն ինձ , գու քաջ ,
Երթ աղէ եւ զկարգ համայն զանօրինին փոխեալ Դաւթի .
Զի եւ մէն մի իւր հրաման գաւ իմն ի ներքս անդ բերիցէ :
Ի վաղիւ ընդ արշալուրջս ճակատամարտ տըւեալ լիցի .
Արփի պայծառ տըւընջեան կայցէ վըկայ ինձ հանգիսի :
Չարահնար իսկ էր խորհուրդ Դաւթի , զոր արդ ի միտ առնում ,
Յընտիր առնել զառիմուտան արեւ ի մարտ պատերազմի ,
Իբրու ինձ զանկանելի նըշանակել զիմ ըզքազուկ :
Տեսցի քաջ : — Երսպառնալիսդ ըզքամ գարձեալ յիս խանգ մարտի .
Վաղուի ես զօրավարեմ , եւ տիւն ողջոյն սակաւ գայցէ
Ի կոտորածըն մեծ զոր տաց : — (Աւ ԼԷԵՆԷՐ) Հան զգա յաչաց իմոց . մեացի . . .
ՅՈՎ . Լստուած անմահ . հայր , զի գործես . հայր . . .
ՍԱԻ . Պապանձեաց : — Հարէք ըզգա .
Եւ վատազգին իւր արիւն զՓրըշտացուքն անդ թող անկցի :
ԵՐԵ . Հուպ առ նըմին իսկ կայ մահ . . .
ՍԱԻ . Այլ յիմն ի վըժ սակաւ է նա :
Առաքեա զիմ ցասումն ի նոմբ , զի ըննախիւր եւ ըզճառայս ,
Ըզմայր , ըզտուն եւ զորդիս հարցէ , սպանցէ եւ ջընջիցէ ,
Եւ զճեան եւ զարմ ամբարիշտ բոլոր ի հողմըն ցընդեացէ .
Որպէս զի եւ յիրաւունս ուրեմն գողցեն քո քահանայք
Եթէ “ Սաւուղ որ գուցէ ” : Յարիւն ի ձէնջ գրգռեալ յաճախ՝
Աջս ի ձեզ ցարգ ոչ շանթեր . եւ ան անգուստ , եւ ընկ անգուստ
Ի ձեր զնովաւ ըմպահկել :
- ԵՔԻ . Յինէն ըզմահ արդարոյ
Ոչ որ ուրեք բարձցէ արքայ . ուստի իմ քաղցր ինձ մահ լիցի
Եւ փառաւոր իսկ հանգէտ : Այլ զերկոցուն ձեր՝ ի վաղուց
Անգարձ կընքեալ է Աստուծոյ . սրբով անկլիք անարգութեամբ ,
Աբեններ փւ գու Սաւուղ . ոչ յոսոխէն , եւ ոչ ի մարտ : —
Հապա գնասցուք : — ԶԱստուծոյ յետին պատգամն առ ամբարիշտ
Ես ետու . նա խուլ եղեւ . իմ վըճարեալ է արդ պաշտօն .
Քաջիկ զիմ կեանս ծախեցի :
- ՍԱԻ . Օ՞ն քարշեցէք ըզգա ի մահ ,
Ի մահ երագ , անողորմ , ի մահ երկար , մահ գառնութեան :

Տ Ե Ս Ի Լ Ե .

ՍԱԻ ՈՒՂ , ՅՈՎԱԹԱՐԱՆ

- ՅՈՎ . Այ անխորհուրդ թագաւոր , եւ զի գործես . կաց . . .
ՍԱԻ . Կարկեմ .
Հրաման է քեզ , Յովնաթան : — Իցեն գու այր պատերազմի :
Եւ իցեն գու ինձ որդի . Իսրայելին իցեն գու քաջ : —
Երթ , գարձիր ի նոմբ . անդ ըզգորա լըջլիր տեղի .
Ի ղեւտական թոյլ պտրապմունս արժանագոյն իցես գու կեալ ,
Եւ ոչ ի շուինգն անդ մարտից , ոչ գու ի գործ արքայութեան . . .
Ի՞նչ է եւ իմ ոչ սակաւս ի թըշնամեաց առ քո երի
Հարեալ ի մարտս անդ գիտապաստ . այլ զոր աստէն արդ հեղուս՝
Ոչ անթըլփատ Փրըշտացոյն , այլ գա արիւն քահանայից :
Միայնակ գու մընաս ի պատերազմն այդ ամբարիշտ :
Եւ միայնակ ես բաւեմ յոր ինչ եւ է ճակատամարտ :
Կացլիր գու վատ ի բացէ անդ ի վաղուեան պատերազմի .
Ես միայն եղէց Սաւուղ : Զի Յովնաթան , առ ի՞նչ Դաւթի .
Սաւուղ եւեթ ինքըն պետ :
ՍԱԻ . Մարտեայց առ քեւ ես առննթեր :
Տայր որ ինձ գիականացեալ անկանել քոյ իսկ առաջի ,
Զի մի լիցի ինձ տեսանել զոր ինչ արեան քո չարաբաստ
Ի վերայ կացեալ մընայ :
Իսկ աղէ որ այն իցէ . մահ :
Մահ որ ի գաշտ պատերազմի՝ արքայօրէն է գա մահ :

ՏԵՍԻԼ Զ.

ՄԵԼԻՔՈՂ, ՄԱՌՈՒՂ, ՅՈՎՆԱԲԱՆ

- ՄԱՌ. ԴՈՆ առանց Դաւթի...
- ՄԵԼ. Չկարեմ ըզնա գրտանեւ...
- ՄԱՌ. Բայց ես գրտից:
- ՄԵԼ. Գուցէ հեռի է նա աստի, խոյս տըւեալ
Ի ցամամնէդ...
- ՄԱՌ. Ցամամն իմ թեւք են եւ հասցէ ըզհետ նորա:
Վայ եղուկ՝ թէ ի մարտին Դաւթի ի դէմս ինձ ելանէ.
Եղուկ եթէ վաղիւ մարտին յինէն ի խորտակեւ
Ոչ ինձ ըզնա գու ածես:
- ՄԵԼ. Աստուած երկնից:
- ՅՈՎ. Ա՛հ, հայր իմ...
- ՄԱՌ. Ինձ ոչ եւս այլ են որդիք: — Ընթա ի խռան անդ ջոկատուց,
Յովնաթան: — Իսկ եւ գու խընդիր արա նրմա եւ գիտ:
- ՄԵԼ. Ա՛հ... ընդ քեզ...
- ՄԱՌ. Է՛հ, ի զուր:
- ՅՈՎ. Հայր իմ, ի քէն ես հեռաւոր
- Աղէ զիսդ ես մարտեայց:
- ՄԱՌ. Ի բաց յինէն ամենեքին.
Դուք ինձ մատըն լինիք, ամենեքին իսկ հայրանենդք.
Երթայք, կամիմ ես. երթայք ի բաց, հրաման է իմ:

ՏԵՍԻԼ Է.

ՄԱՌՈՒՂ

Միայն ես կամ ընդ անձին: — Յինէն եւեթ ի Սաւուղայ
(Աւաղ ինձ արքայիս) յինէն եւեթ ես ոչ գողամ:

ՀԱՆԴԵՍ ՀԻՆՊԵՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ԴԱՌԻԹ, ՄԵԼԻՔՈՂ

- ՄԵԼ. Եւ փեսայդ իմ, արի եկ. զի յառաջեալ իսկ է գիշեր...:
Լըսես ըզընդ բանակին. ընդ այդս այդուն մարտ խառնեսցի: —
Ան հայրենին վրանաւ համայն կայ անջըռունջ: Տես եւ երկինք
Քեզ ի փախուստ նըպաստեն. սահի լուսին եւ զըողան յետին
Ըսքոյէ ամպ մըթագին: Օ՛ն երթիցուք, զի չեք ոք աստ
Որ ի վերայ հըսկիցէ. ընդ զառիվայր այս ի Լեւնէն
Աղէ իջուք ի խոնարհ, եւ աջակից լիցի մեզ Տէր:
ԴԱՌ. Հարսն իմ, ով իմոյ հոգւոյս ընտրեւագոյն գու հատոր,
Մինչդեռ այն ինչ Իսրայէլ ի գործ մարտի վառեալ կազմի,
Չխալդ իցէ զի Դաւթի ճեպ ի փախուստ պատրաստիցի.
Աղէ եւ զի՛նչ իցէ մահ: — Ինձ կալք աստէն են մընալոյ.
Հարցէ Սաւուղ թէ կամի. շատ է զի նախ ի թըշնամեաց
Ես գունդագունդ թաւալեցից:
- ՄԵԼ. Ա՛հ, գու գիտես իսկ ոչ, Դաւթի,
Ձի հայրն ըսկիզբն արդ արար յարեան թանալ զիւր բարկութիւն.
Աքիմէնք աստ գրտեալ՝ անկաւ ցամամն նորին ի զոհ:
- ԴԱՌ. Ձի՛նչ լըսեմ. ի քահանայս դարձոյց նա զսուր: Վայ քեզ, Սաւուղ...
- ՄԵԼ. Բայց, ո՛հ, եւ զայլ ինչ լուրիցես. հրաման խուժգուժ ինքնին արքայ
Պատուիրէր Աբեններեայ, զի թէ երբեք ի խռան մարտի
Յայտնեսցիս գու ուրեք՝ ի քեզ ըզգէնս գարձուսցեն քաջք:
- ԴԱՌ. Եւ իմա ըզդոյն հանգուրժիցէ հաւատարիմն Յովնաթան:

- ՄԵԼ. Աւաղ, եւ իմ է ձեռնհաս : Ըզհայրենին սրբամբողովեան
Եւ ինք կրրեաց արգասիս . եւ յուսահատ դիմեալ գրնայ
Ի մեջ զինուց խնդրել մահ : Ո՛հ, տեսանես զի ոչ եւս այլ
Քեզ աստէն կալ մարթիցի . հարկ է տեղի տրեալ ի բաց
Գրնալ, եւ ակն ունել զի կամ հայրն ի խորհուրդս իւր փոխեսցի,
կամ ընդ տիովքն ընկճեսցի . . . : Անագորոյն հայր, դու ինքնին,
Դու հարկ տունես գըստեր քոյին աւուր մահուդ իղձ լինելոյ . .
Բայց ես ոչ, ոչ ըզքոյին ցանկամ ես մահ . կեաց բարեբաստ .
Կեաց՝ եթէ կեալ ինչ կարես . ո՛հ շատ իցէ ինձ՝ այս եւեթ՝
Ընդ առն իմ կեալ հանապազ . . . Օ՛ն աղէ եկ, եկ երթիցուք . . .
- ԴՍԻ. Ա՛հ, եւ քանի՜ ծանր իցէ ըզպատեբազմն ինձ լըքանել :
Անծանօթ իմն ի սրբախ լըսեմ ես ձայն յիս գոչելով .
“ Հասեալ է օր տագնապի Խորայելի եւ արքային ” . . .
Ո՛ տայր . . . այլ ոչ . աստէն անմեղ հեղաւ արիւն քահանայից .
Պիղծ է բանակն, իսկ եւ երկիրն շաղախեալ եւ անսուրբ .
Աստուած ընդ այն ոչ հանդուրժէ . ոչ եւս այլ մարթ իցէ Դաւթի
Ի վայրբս աստէն տալ ճակատ : — Վասն որոյ հարկ իցէ առ Ժամս
Ինձ քո տեղի տալ երկիւղիդ, եւ հնարաւորն քո սիրոյ : —
Բայց եւ գու տուր իմոյս տեղի . . . Թող զիս միայն, աղաչեմ . . .
- ՄԵԼ. Թողից ըզքեզ : Ըզդրօշակէդ քո պինդ ունիմ . ոչ, մի եւս այլ
Մի եւս ի քէն զատանիմ . . .
- ԴՍԻ. Լուր ինձ աղէ : Քո յամրաքայլ
Գրնացք ոտից ոչ ընդ իմոցս ի կըշիւ գալ բաւիցեն .
Ինձ հարկ է գըժուար ուղիս հասանել սուր ի գարշապար,
Զի լիցի անձն իմ ինձ ի գիւտս, փոխանակ զի դու զայդ կամիս :
Իսկ զիւրդ ոտք քո քնքուշ կոշկոճանացդ այդ տոկայցեն .
Եւ թողից լըքից ըզքեզ անոք յամայս անապատից :
Տեսանես, զի վասն քո ի ծանօթումն եւ ես եկից,
Եւ քարշիցիմք երկոքին անդէն եւ անդ ի դէմս ահեղ
Սրբամբողովեան արքայի : . . . Ո՛հ, եւ խորհել ես յայդ սարսեմ : . . .
Այլ եդեալ թէ եւ զերծցուք, իբր ինձ ըզքեզ է կարելի
Բանմխիթար քո ի հօրէ ի բաց քեցեւ, որ յարքունեացն
Արտաքոյ անցուցանէ ի տառապանս պատերազմի .
Հինաւուրցոն թախծելում կարեւոր իմն է քաղցրութիւն :
Ա՛հ, կաջիւր դու արտասոււց նորին, ցաւոցն եւ մոլութեան .
Դու եւեթ ամոքես, դու զնա պաշտես, եւ գու եւեթ
Ըզնա ի կեանս անդ ունիս : Ինքն իմ մահուս է հետամուտ .
Ես ողջ ըզնա գու ցանկամ եւ բարեբաստ, եւ յաղթական . . .
Այլ սերկեան գողամ ընդ նա : — Դու մինչեւ հարսն՝ գուստր էիր .
Եւ ոչ անդր իսկ քան ըզպարտս քեզ զիս օրէն իցէ սիրել :
Քան զիմ արդի փրկութիւն զինչ այլ իցէ քեզ ցանկալի .
Մի ըզքեզ գողանայցես ի շատ իսկ քո եղուկ հօրէդ :
Հազիւ հասեալ ի փրկութիւն՝ Թուլցից անդէն քեզ աւետիս .
Եւ ընդ փոյթ ակն ունիմ գարձեալ լիցի մեզ միանալ :
Արդ ըզմտաւ ած աղէ՝ ինձ քանի՜ ծանր է զքեզ թողուլ . . .
Բայց սակայն . . . եղունկ զինեւ . . . զեմրդ . . .
- ՄԵԼ. Վա՛յ ինձ . . . եւ կորուսի . . .
- ԴՍԻ. Դարձեալ ըզքեզ . . . դարձեալ զիւրդ ըզքեզ թողից զի միայնակ
Յանցեալ ի վիշտս անդ դառնայցես . յերերեալ կեանս, բիւր ի վըտանդ .
Եւ յամայի լերանց խորս : . . . Ա՛հ, թէ ինձ գոյր ընդ քեզ լինել . . .
Թեթեւագոյն գործէի զաղէտըս քո . . . հաղորդելով . . .
- ՄԵԼ. Ո՛հ, աղաչեմ ի սէր մեր, նա թէ եւ պետք են՝ տամ հրաման
Որչափ իցէ սիրելոյ . ոչ է քեզ պարտ եւ ոչ իսկ մարթ
Ըզկրնի գալ փեսայիդ առանց ծանու իւր վըտանգաց : —
Այլ թէ փրկել կամի զիս Տէր՝ ոչ եւս ինձ պարտ է դանդաղել .
Սրանայ Ժամ . գուցէ աստուատ ի խորանէ ոք լըքեսեալ
Եւ մեզ գուշակ լիցի չար : Ես ըզերկնքըս զայսոսիկ
Ոտն առ ոտըն ճանաչեմ . վասն որոյ բնաւ ի մարդկանէ
Անշուշտ է ինձ զերծանել : — Հապա եկ, տուր զյետին համբոյր :
Տէր ընդ քեզ եղիցի . եւ հօրն քում դու կաց մընա,
Մինչեւ ուրեմն առ փեսայդ ըզքեզ դարձեալ զուգեն երկինք . . .
- ՄԵԼ. Յետին համբոյր : . . . Ա՛հ, եւ ընդէր ոչ մեռանիմ . . . Սիրտ իմ գելու . . .
- ԴՍԻ. Իսկ եւ իմս . . . այլ . . . սանձեա . . . զարտար : — Տուր թեւս օտից, Աստուած հըզօր :

ՏԵՍԻԼ Բ.

ԾԵԼՔՈՂ.

... Ա՛հ, խոյս տայ... Տէր իմ Տէր... օրացայց ըզհետ... այլ ո՞ր կապանք
Պընդեալ թըւին զիս երկաթիք... ըզհետ գիմել չըկարեմ: —
Խուսափէ՛... : Հազիւ յոտին կամ... Բրբ ըզկնի... : Ա՛հ, միւսանգամ
Ըջնա յինէն կորուսի... : Ո՞ր գիտէ երբ իցէ տեսցես... :
Չարարախտ կին, հարսն իցես գու... : Եղին երբէք քեզ հարսանիք... : —
Ոչ, մի եւս այլ առ անգուծ հարրն... : ըզհետ քո եմ, քաղցր ամուսին... : —
Այլ թէ եւս հետեւիցիմ, այո՛ ըջնա կորուսանեմ.
Ի՞նչ ըզյամբ իմ ըզգընայս զերազ հետովքն իւր թանգուզել... : —
Այլ զինչ այս... : Ի բանակէն լըսի բարբառ... : զինո՛ւց այս շաչ... :
Աճէ չըսինքն... : Եւ կերկերեալ զուգախառնի փողոյ եւ ձայն... :
Երկվարաց գափր ոտից... : Իսկ զինչ այս, զինչ ո՞վ երկինք... :
Մինչ չեւ գարձեալ արփենեոյն չէր Սաւուզայ խառնել ի մարտ... :
Ո՞ր գիտէ... : Արդեօք եղբարքն... : Իմն Յովնաթան... : Եղունկ զինեւ... :
Գուցէ ի վտանգ... : — Այլ արտասուս, կաղկանձ եւ խոր հեծեծութիւնս
Անգուստ ի խորանէ հօրն ամբարձեալ ելանեն... :
Եղունկ հայր... : Ծն ես առ նա... : Ո՞վ տեսութեանս... : ահա ինքնին
Այսր հասանէ... : Ինքն իսկ է, այլ յորպիսի՞ գէմս... : Ա՛հ հայր իմ... :

ՏԵՍԻԼ Գ.

ՍԵՒՈՒՂ, ԾԵԼՔՈՂ.

- ՍԵՒ. Ըստուեր փէժխընդիր եւ ահաւոր, կաց գագարեալ,
Ո՛հ թող զիս... : Տես աղէ, տես զիս առ քո ոտս ի թաւալ... :
Եւ յո՞ փախեայց ես... : աւաղ, ո՛ւր զօղեցայց : Ա՛հ հաշտեցիր,
Ըստուեր վայրագ, ահեղ ըստուեր... : Այլ խուլ է նա յաղերս ձայնիս,
Խուճապէ զիս... : Ո՞վ երկիր, պատառեսիր, կուլ զիս ի քեզ... :
Զի մի գըժնեայ չայեցուածք խրոխտ ըստուերին յիս շանթեցեն... :
ԾԵԼ. Եւ ուստի՛ է քեզ փախչել... : չիք որ ըզքեզն հալածիցէ :
Չայր, գու զիս ո՞չ տեսանես... : ո՞չ ճանաչես զիս, ո՞վ հայր :
ՍԵՒ. Ո՞վ աւագ քահանայդ սուրբ, կամփս զի կամ ես աստէն... :
Ո՞վ բուն իմ հայր՝ Սամուէլ, գո՛ւ զայդ կամփս... : աւաթիկ ես
Ծուռն ի հրամանս կըրկնեմ քո վեհ : Դու ինքն ի գլուխս այս քո ձեռամբ
Դու զայս պըսակ կապեցիր... : գու զարգարեր... : գու եւ զհամայն
Կապտեա զնորուն արգ ըզփառս... : գու արգ ըջնա հար առաթուր :
Այլ... : ըզհրաժան Սատուծոյ ահեղ սուսեր որ ըզբբօքս
Առկախեալ... : ո՛հ որ կարեագ ի բաց արա, ոչ յինէն՝ ոչ,
Այլ յառ իմոց որդեկաց : Որդիքս անմեղ են յիմ վըխպանս... :
ԾԵԼ. Ո՞վ գըժընդակ եւ անուր պայման : — Ա՛հ հայր, ի ճըշմարտէն
Ըստերիւրեալ մոլորի քոյդ տեսութիւն... : ո՛հ յիս դարձիր... :
ՍԵՒ. Վա՛ ինձ... : Խաղաղութիւն յերեսըս քո... : սէգ ծերունի,
Իցէ զաղերս իմ լըսիցես... : ոչ, ես յոտից քոց ոչ ելից՝
Մինչ չեւ գու նախ ոչ բառնաս զորդիքս յահեղ ի քո վըխտուց : —
Զինչ խօսիցիս... : ո՞վ բարբառ... : “Քեզ եւ Դաւիթ իսկ էր որդի... :
Դու հալածեր, գու եւ զնորա խընդրեցեր մահ յի... : Զինչ յուշ ամեա... :
Կաց աղէ... : ո՛հ կալ ի վեր... : Ո՞ւր է Դաւիթ, օն խընդրեցի... :
Դարձցի գա, հարցէ սպանցէ զիս եւ անցէ յարքայութիւն... :
Շատ է զի գուծ նա արկցէ յիմ անդ որդիս, թող տիրեսցէ... : —
Այլ սակայն գու՝ անողմք... : Արեան ունիս ականողիս,
Հուր ի սուր եւ բազուկ հուր, եւ յընդարձակդ անդ ի ոընդանց
Ըզարդատր շընչես բոց, եւ յիս ընդգէմ արձակես... :
Ա՛հ, հարաւ յիս, տոչորիմ... : Եւ յո՞ փախեայց... : Ծն ի սոյն դեհ :
ԾԵԼ. Իսկ ապա չիցէ ունել ինձ, հայր, ըզքեզ... : ի ճըշմարիտ... :
Ա՛հ լուր ինձ... :
ՍԵՒ. Սակայն ոչ... : ա՛հ զի անտի գետ մեծ արեան

Ըզգնացս ոսկի իմ փակէ : Եայսկոյս եւ յայն , դա՛ւրն տեսիլ ,
 Հորազրաւ գիականց կարկառք կուտեալ կան դիզադէզ .
 Մահ ամենայն ինչ անգէն . . . օն յայս գիմեմ . . . : Այլ զինչ տեսի .
 Ո՛հ էք գուր . — “ Աքիմէլքայ եմք մեք որդիք : Ես իսկ եմ
 Աքիմէլք : Մեռիւր Սաւուղ , մեռիւր , , — Ա՛հ , զինչ այս աղաղակք :
 Աւանիկ նա . յարիւն ի նոր կայ թաթաւեալ , եւ զիմ լափէ :
 Այլ ի թիկանցս իմ , աւանդ , եւ ո՛ր զհերաց իմ կալաւ . . .
 Դո՛ւ Սամուէլ : — Զինչ ասաց . “ Փոքրը միւս եւս , եւ գուր համայն
 Ընդ իս իցէք , , : Ես միայն , ես լոկ ընդ քեզ եղէց . սակայն
 Զի՛ որդիքս . . . : — Ո՛ւր իցեմ ես : — Ըսպառեցան յանկարծ ըստուերքն :
 Զինչ ասացի : Ո՛ւր եմ ես : Զի՛ գործիցեմ : Ո՛րիցես գուր :
 Զինչ այդ լռեմ շառափուն . դա ինձ մարտի թըւի բարբառ .
 Սակայն գեռ ոչ լուսանայ . . . այո՛ , այո շուինդն է մարտի :
 Օ՛ն առ իս սաղաւարտ . առէք վահան ինձ եւ ըզտէք .
 Հապա փութացէք . զէն աղէ զէն տուր զարքայի :
 Մեռանել կամք են ինձ , սակայն ի դաշտ պատերազմի :
 Հայր , զի՛ գործես . կաց բաւեա . . . եւ առ քո գուստր . . .

ՄԵԼ .
 ՄԱԻ .

Ո՛ր , զինչ գուստր .

Ըզգէն կամիմ ես ըզգէն . օն իմ անաս հրամանիս :
 Սաղաւարտ , տէգ եւ ասպար , ահաւանիկ են իմ որդիք :
 Ես ըզքեզ ոչ թողում , ա՛հ ոչ . . .

ՄԵԼ .
 ՄԱԻ .

Իսկ սաստկագոյն գըռնէն փողք . . .
 Օ՛ն անդ սլասցուր . ինձ շատ է սուր իմ եւեթ : — Օն ի բաց կաց ,
 Թող զիս . անաս : Անդ-սրանամ , անդ մահ բնակէ , ես մահ խընդրեմ :

Տ Ե Ս Ի Լ Դ .

ՍԱԻՈՒՂ , ՄԵԼՔՈՂ , ԵՐԵՆԵՐ ԵՒ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԶՕՐԱԿԱՆՔ

ԱՐԵ .
 ՄԱԻ .
 ԱՐԵ .
 ՄԱԻ .
 ԱՐԵ .

Եղուկ արքայ . . . : Ե՛մ փախչիս . սեաւ այս գիշեր :
 Այլ մարտն ընդէր . . .
 Թըշնամին հեղաւ յանկարծ , եւ պարտեալ մեք ամենեւին . . .
 Զինչ , պարտեմ . եւ անօրէն կեանս տակաւին :
 Կեամ այո՛ ,

ՄԱԻ .
 ՄԵԼ .
 ՄԱԻ .
 ԱՐԵ .
 ՄԱԻ .
 ՄԵԼ .

Այլ զի ըզքեզ կեցուցի : Արդ իսկ արդեօք Փրոքշտացին
 Գըռու եւ քայլը տացէ . հարկ է նախկին անդ ի թափոյն
 Խուսափել , մինչեւ հասցէ տիւ . եւ ի սեպն այն զառիվեր
 Ընդ սակաւուցս իմ հանից . . .
 Զինչ . Ժողովուրդն իմ անկանի ,
 Եւ ես կեայցեմ :
 Եկ , հայր , եկ . . . ա՛նաց չըռնիդն . ահա խուժեն . . .
 Երջնաթան . . . եւ որդիք իմ . . . փախեան . . . լքեմ զիս եւ նոքա . . .
 Ո՛հ երկինք . . . որդիք քոյին . . . ոչ փախեան ոչ . . . Եղուկ նոցա . . .
 Խեղամուտ եմ . ամենեքին արդ կան անկեալ : . . .
 Աւանդ զինեւ . . .
 . . . Եղբայրք իմ . . . ամենեքին . . .

ԱՐԵ .
 ՄԱԻ .

Ո՛հ , ո՛չ եւս են քեզ որդիք :
 — Իսկ զինչ մընայ . . . (Ա՛ ՄԵԼՔՈՂ) Դո՛ւ եւեթ , սակայն գուր ո՛չ թէ ինձ մընաս : —
 Ի բազմաց իսկ հետէ զհամայն ի սիրտ եմ հաստատեալ .
 Հասեալ է ժամն : — Աքեններ , վերջին է այս իմ հրամանաց .
 Արդ ըզգուստր իմ առաջնորդեա յապահովի :

ՄԵԼ .

Ոչ , հայր իմ , մի .
 Ես ըզքեւ իսկ պատեցայց . օրիորդի դէմ թըշնամին
 Ըզսուր ոչ արձակիցէ :

ՄԱԻ .

Ա՛հ լըռեա , գուստր իմ . . . մի լիցի
 Զի եւ ես ըզլու հարից : Պարտեալ արքայ ոչ արտասուէ :
 Աքեններ , փրկեա ըզդա , երթ . յոսոխին բայց թէ ի բուռն
 Անկանիցի , աղէ մի ասես զնա գուստրը Սաւուղայ .
 Այլ գողջիր նոցա անգէն . “ Հարսն է Դաւթի , , . եւ պատկառին :
 Երթ , փութա . . .

ԱՐԵ .

Եթէ իմիք ես արժիցեմ՝ երգուեալ , զերծցի .
 Այլ ընդ նրմին եւ ըզքեզ . . .

ԾԵԼ .

ՍԵՒ .

ԾԵԼ .

Ա՛հ, հայր . . . զքեզ ոչ կամիմ թողուլ . . .
 Բայց ես կամիմ, եւ թագաւոր՝ դեռ ես իսկ եմ . . . Այլ ահա գան
 Մերձին զէնք . ա՛հ Աբեններ, փութա սուրա, եւ բուռն ընդ քարշ,
 Թէ պէտք ինչ են, հան ըզդա :

Հայր իմ հայր . . . եւ մինչ խապառ . . .

ՏԵՍԻԼ Ե .

ՍԵՒՈՒՂ

Ա՛հ որդեակք իմ . . . — Եղէ հայր : — Ահա միայն ես, ո՛վ արքայ .
 Ոչ յայնքան մընաց որ քեզ բարեկամացդ եւ ծառայից : —
 Հաճ իցես, ով Աստուծոյ, ահեղ զայրոյթդ ինձ անողոք : —
 Այլ դու մընաս յիս, սուսեր . հաւատարիմդ ըսպասարկու
 Կարեաց յետին, եկ արդ եկ : — Ահաւանիկ սա կաղկանձին
 Խրոխտացեալ յաղթականին . ջահից նոցին բորբոքելոց
 Յաջս իմ փայլակն հարկանի . . . բիւր շողան զէնք . . . — * Պի՛ղծդ այլազգի,
 Գըտցես զիս աստանօր արքայաբար գոնեա . . . զրաւեալ :

* Հարկանի զանքն էւ ընդ սուր իւր անիւնի : — Հասանէն հորտե Կան Փշտադիս յաղթող Զահիս Լադէիւն
 էւ սուր ի յետն նոցա յարիս զաղտիւնալ : Եւ մինչ միտառն Բաթին ՂԱսաղաւ ի յայն աղաղակի, յգի վարժոյն :

ՎԵՐՋ



ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ